# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 18

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-ին կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը

- <<Վայքը հանք չի դառնա>> նախաձեռնության դիմումի քննարկման՝ Վայք համայնքի Ազատեկ բազմամետաղ հանքավայրի շահագործման վերաբերյալ:
- Վայք համայնքի ավագանու 08/11/2019թ. <<«Վայք քաղաքի մանկապատանեկան մարզադպրոց» և «Վայք քաղաքի Արևիկ մարզադաշտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու « Սպորտի և երիտասարդության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կենտրոն ստեղծելու մասին>> թիվ 62 որոշումը(ՆԻՍՏ N 8) ուժը կորցրած ճանաչելու մասին:
- Վայք համայնքի ավագանու 08/11/2019թ. <<«Վայք քաղաքի մանկապատանեկան մարզադպրոց» և «Վայք քաղաքի Արևիկ մարզադաշտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու « Սպորտի և երիտասարդության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կենտրոն ստեղծելու մասին>> թիվ 62 որոշումը(ՆԻՍՏ N 8) ուժը կորցրած ճանաչելու մասին:
- Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 19**

<<ՎԱՅՔԸ ՀԱՆՔ ՉԻ ԴԱՌՆԱ>> ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ՝ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲԱԶՄԱՄԵՏԱՂ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով, «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Վայք համայնքի մոտ 400 բնակիչների կողմից ներկայացված հանրագիրը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով շարադրված տեղական ինքնակառավարման սկզբունքներով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ նախնական համաձայնություն Վայք համայնքի Ազատեկ բազմամետաղ հանքավայրի փակ շահագործման վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն փաստաթղթեր ձեռք բերելու մասով:
2. Հարցին անդրադառնալ լիազոր մարմնի կողմից ՇՄԱԳ/**շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում**/ փաստաթղթերի առկայության ժամանակ

Կողմ -6 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՔԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 20**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/11/2019թ. <<ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ԵՎ <<ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԻԿ ՄԱՐԶԱԴԱՇՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ <<ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ&>> ԹԻՎ 62 ՈՐՈՇՈՒՄԸ(ՆԻՍՏ N 8) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով. և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բյուջեի լրացուցիչ հոսքերի հաշվին տեղի է ունենում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների առողջացում

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 08/11/2019թ. <<«Վայք քաղաքի մանկապատանեկան մարզադպրոց» և «Վայք քաղաքի Արևիկ մարզադաշտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և «Սպորտի և երիտասարդության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կենտրոն ստեղծելու մասին>> թիվ 62 որոշումը(ՆԻՍՏ N 8)
2. Դիմել ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ <<Վայք քաղաքի Արևիկ մարզադաշտ>> և <<Վայք քաղաքի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացները կասեցնելու խնդրանքով՝ կազմակերպությունների գործունեությունը շարունակելու նպատակով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

*28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.*

### ՈՐՈՇՈՒՄ N 21

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 31/01/2020թ. <<ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 4 ՄԻԱՎՈՐ 11.20905 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11.20905 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 8 ԵՎ <<ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ(ՆԻՍՏ N 1) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի ավագանու 31/01/2020թ. թիվ 8 և թիվ 15-Ն որոշումներում կատարելու հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 4 ՄԻԱՎՈՐ 11.20905 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11.20905 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 8 որոշման(ՆԻՍՏ N 1) մեջ ավելացնել

| Հ/հ | Գտնվելու վայրը | ծածկագիրը | մակերեսը/հա/ | նպատակային նշանակությունը | գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|
| 1 | գ. Ջերմուկ | 10-023-0306-0130 | 8,13950 | գյուղատնտեսական | այլ |
| 2 | գ. Ջերմուկ | 10-023-0304-0001 | 0,95905 | գյուղատնտեսական | այլ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | գ. Ձեդեա | 10-023-0305-0001 | 0,72299 | գյուղատնտեսական | այլ |
| 4 | գ. Ձեդեա | 10-023-0304-0001 | 1,38751 | գյուղատնտեսական | այլ |

- ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31/01/2020թ. «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 15-Ն որոշմամբ(ՆԻՍՏ N 1) հաստատված հավելվածի տեղական տուրքեր բաժնի 1-ին կետի <<բ>> ենթակետի 3-րդ տողի գյուղական բնակավայրերի սյունակում նշված <<50000>> թվերը փոխել <<25000>> թվերով, 4-րդ տողի գյուղական բնակավայրերի սյունակում նշված <<100000>> թվերը փոխել <<50000>> թվերով,
- ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31/01/2020թ. «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 15-Ն որոշմանը(ՆԻՍՏ N 1 )ավելացնել նոր հավելված/կցվում է/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՔԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

Հավելված

Համայնքի ավագանու 28/02/2020թ.

թիվ 21-Ն որոշման

| | | | |
|---|---|---|---|
| | Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների վճար սահմանվում է | Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն | 500/հինգ հարյուր/ |
| | | Ծննդօգնություն<br>1. Թեթև միջամտություն<br>2. Ծանր միջամտություն | 1000/հազար/<br>2000/երկու հազար |
| | | Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» Պետական ծրագրում ընդգրկված Հակաանասնահամաճարակային միջոցառումներ) | Մանր կենդանի 50/հիսուն/<br>Խոշոր կենդանի 100/հարյուր/ |
| | | Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | 500 /հինգ հարյուր/ |
| | | Ախտահանություն | 1 քառ. Մետր 150 /հարյուր հիսուն/ |
| | | Միջատազերծում (դիզինսեկցիա) | 1 քառ. Մետր 150 /հարյուր հիսուն/ |
| | | Կրծողների դեմ պայքար (դեռատիզացիա) | 1 քառ. Մետր 200 /երկու հարյուր/ |
| | | Արհեստական սերմնավորում խոշոր եղջերավոր<br><br>խոզեր | 6000 /վեց հազար/<br>2000/երկու հազար/ |

Աշխատակազմի քարտուղար Գ. Մուշկամբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 22

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝հողամասի

| Հ/հ | հողամասի օտարման նպատակը | հողամասի գտնվելու վայրը | մակերեսը, հա | մեկնարկային գինը, դրամ | հողամասի ծածկագիրը | նպատակային նշանակությունը | գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | գյուղ գործունեություն ծավալելու | գ. Արին | 3,0 | 1 000 000 | 10-009-0118-0048 | գյուղատնտեսական | արոտավայր |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ